**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

25 հունիսի 2025 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Վալոդյա Գրիգորյանը, Դավիթ Ախտոյանը, Արփինե Առաքելյանը, Կարապետ Արթենյանը, Լյուդվիգ Գյուլնազարյանը, Արաքսյա Վարդանյանը, Մարինե Աբրահամյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Անյուտա Սաֆարյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մանուկյանը**

**ԼՍԵՑԻՆ-** ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵկ. ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 25-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Կողմ -12 | Դեմ -1 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ | |
| ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ | | |
| ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ | | |
| ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ | | |
| ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ | | |
| ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ | | |
| ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ | | |
| ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ | | |
| ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ | | |

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 56-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ-</u> *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ -(Զեկ. ՔՆԱՐԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ)***

Ղեկավարվելով՝«Տեղական ինքնակառավարմանմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգիմասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 703829.793 հազար դրամ 40 լումա, որից վարչական մասի ազատ մնացորդը ՝ 382173.964 հազար դրամ 30 լումա և ֆոնդային մասի ազատ մնացորդը ՝ 321655.829 հազար դրամ 10 լումա:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2025 թվականի բյուջեն՝ համաձայն NN 1-9-րդ հավելվածների:
3. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելուն:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման փոփոխություններ կատարելու համար 50 տոկոսի չափաքանակով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ -12 | Դեմ -0 | Ձեռնպահ -1 |
|---|---|---|
| ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ | | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ | | |
| ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ | | |
| ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ | | |
| ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ | | |
| ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ | | |
| ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ | | |
| ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ | | |
| ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ | | |

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 57-Ն)*

**<u>ԼՍԵՑԻՆ -</u> *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 58-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ - (Զեկ. ԱՐԱՔՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Փարաքար համայնքի ղեկավարի առաջարկությունը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու «Հայաստանի Հանարապետության Արմավիրի մարզի Փարաքարիհամայնքի վարչական տարածքում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» 2024 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 58-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 58-Ն)*

**ԼՍԵՑԻՆ-_*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՐԱՔՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Փարաքար համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փարաքար համայնքի ավագանու «Զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային, տնտեսական և ենթակառուցվածքների հարցերի» 2025 թվականի հունիսի 18-ի և «Կրթության, մշակույթի,սպորտի, սոցիալական հարակից հարցերի» 2025 թվականի հունիսի 20-ի մշտական հանձնաժողովների դրական եզրակացությունը.***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնությունները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը, բացառությամբ որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 3-րդ ենթակետն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից, որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերը գործում են մինչև որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի ուժի մեջ մտնելը և նրանց գործողությունը չի տարածվում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 59-Ա)*

***<u>ԼՍԵՑԻՆ - </u>ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ -(Զեկ. ԱՐԱՔՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 16-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետով՝***Փարաքար համայնքի ավագանին որոշում է***

1. Տալ նախնական համաձայնություն <<ՍԱՄ-ՇՈՂ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Մայրաքաղաքային փողոց 27/2 հասցեում նախատեսվող առևտրահասարակական կենտրոն կառուցելու գործունեության իրականացմանը:
2. Առաջարկել Փարաքար համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն, առկայության դեպքում՝ նաև շահագրգիռ հանրության կարծիքները, դիտողությունները և առաջարկություններն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամ Կարեն Գրիգորյան- ցանկանում եմ ճշտել ով է սեփականատերը, խնդրում եմ հարցը ներկայացնել ավելի մանրամասն, բոլոր հարցերը արագ -արագ անցնում եք, ցանկանում եմ ավելի բաց խոսենք հարցերի մասին:

Զեկուցողը նշեց, որ հարցի վերաբերյալ եղել է հանրային լսում, եղել են մասնակիցներ, որը փաստում է արված լուսանկարները, կազմվել է արձանագրություն, տեսաձայնագրվել է, Փարաքար համայնքի Թաիրով գյուղում ՝ Մայրաքաղաքային փողոցում՝ 27/2 հասցեում իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասում կառուցելու են առևտրահասարակական կենտրոն: Հարցը դրվեք քվեարկության.

| Կողմ -12 | Դեմ -0 | Ձեռնպահ -1 |
|---|---|---|
| ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ | | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ | | |
| ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ | | |
| ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ | | |
| ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ | | |
| ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ | | |
| ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ | | |
| ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ | | |
| ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ | | |

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 60-Ա)*

***<u>ԼՍԵՑԻՆ -</u> ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ - (Զեկ. ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի 4-րդ հոդվածով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել «Փարաքար համայնքիի 2026 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2.2026 թվականի բյուջետային գործընթացով սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը և դրա գծով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումները ստանալու հայտը ներկայացնել լիազոր պետական մարմին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:
Զեկուցողը մանրամասնեց, որ նախատեսվում է կառուցել ֆոտովոլտային կայաններ մանկապարտեզի և մշակույթի տանիքներում տեղադրելու համար, հնարավոր է նաև լուսավորել շինությունների հարակից փողոցները: Թաիրով և Այգեկ բնակավայրերում նախատեսվում է կառուցել լուսավորության ցանց: Ստացվել է բնապահպանության և առողջապահության նախարարության համաձայնությունը, նախատեսվում է այդ ծրագրերն իրականացնել 2026 թվականին: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 50 մլն դրամ:
Կարեն Գրիգորյանը հետաքրքրվեց ֆոտովոլտային կայանների հզորություններից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 61-Ա)*

***<u>ԼՍԵՑԻՆ -</u>ԼՈՒՍԻՆԵ ՅՈՒՐԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Լուսինե Յուրիկի Սիմոնյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
Կարեն Գրիգորյանը խնդրեց, որ Լ.Սիմոնյանն ավելի մանրամասն ներկայացնի իր կենսագրականը և անցած ուղին:

Ավագանու անդամ Օ.Ախվերդյանը նշեց, որ եթե կարևոր հարցեր կան տանք , եթե ոչ իզուր ժամանակ չվատնենք:

Կարեն Գրիգորյանը նշեց, կենսագրությունը պետք էր ներկայացնել, որ բնակիչներն իմանան համայնքի ղեկավարի տեղակալ է նշանակվում բանիմաց մարդ:

Ավագանու անդամ Կարեն Գրիգորյանը նշեց, որ խմբակցության կողմից կա նախորոք պայմանավորվածություն բոլոր հարցերին կողմ քվեարկել:

Նելլի Եսայանը նշեց, որ այդ հարցերի քվեարկությունը պայմանավորված չի, նա արդեն ներկայացրել էր իր կենսագրականը և կարիք չկար նրան իզուր հուզմունքի հասցնել:

Լ.Սիմոնյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 62-Ա)*

***<u>ԼՍԵՑԻՆ</u> - ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՐԱՄԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի կողմից 2025 թվականի հունիսի 17-ին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը, քաղաքացի Անուշավան Արամի Թորոսյանի 2025 թվականի հունիսի 10-ի N 2696 դիմումը և Փարաքար համայնքի ավագանու <<Քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի>> մշտական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 20-ի N 3 դրական եզրակացությունը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող՝ Անուշավան Արամի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0503-0008 կադաստրային ծածկագրով, 0,04 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հողատեսքը՝ վարելահող/ հողամասի նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային

նշանակության, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ հետագայում անասնաշենք - պահոց կառուցելու համար:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողը նշեց, որ եթե ընդիմադիր ավագանիններն էլ մասնակցեին ավագանու մշտական հանձնաժողովների նիստերին, իրենք էլ կհայտնեին իրեն կարծիքները, տեղյակ կլինեին քննարկվող հարցերին մանրամասնորեն:
Կարեն Գրիգորյանը ցանկացավ նորից ընդհատել դիտարկում անելու համար, նիստը վարողը նշեց, որ եթե զեկուցվող հարցի վերաբերյալ հարցեր կան ըստ ավագանու կանոնակարգի կարելի է տալ, միայն ըստ էության:
Կարեն Գրիգորյանը լքեց նիստերի դահլիճը և չմասնակցեց հետագա հարցերի քննարկմանը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 63-Ա)*

***LՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշման 2-րդ հավելվածի 39-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2025 թվականի հունիսի 9-ին տրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-09062025-04-0171 որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Ֆ. Նանսենի փողոց թիվ 1/1 հասցեում գտնվող՝ 04-094-0181-0001 կադաստրային ծածկագրով, 0.1246 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համարել Փարաքար համայնքի սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 64-Ա)*

**LՍԵՑԻՆ - *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ -(Զեկ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 և 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշումներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2025 թվականի մայիսի 5-ին տրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-05052025-04-0005 որոշումը, քաղաքացի Պարգև Գևորգի Գալստյանի 2025 թվականի մայիսի 7-ի N 2044 դիմումը,Փարաքար համայնքի ավագանու <<Քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի>> մշտական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 20-ի N 3 դրական եզրակացությունը.. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Տալ համաձայնություն Պարգև Գևորգի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող՝ 04-074-0024-0014 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ 04-074-0024-0023-ից կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 57.0 քառակուսի մետր մակերեսով հողամասի սուբյեկտի փոփոխություն՝ Պարգև Գևորգի Գալստյանի կողմից պետական գրանցում ստանալու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 65-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ-</u>** ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ - (Զեկ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 և 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշումներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2025 թվականի ապրիլի 3-ին տրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-203042025-04-0082 որոշումը, քաղաքացիներ Փառանձեմ Ֆրունզեյի Պողոսյանի և Մանվել Ֆրունզեյի Պողոսյանի 2025 թվականի ապրիլի 25-ի N 1835 դիմումը,Փարաքար համայնքի ավագանու <<Քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի>> մշտական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 20-ի N 3 դրական եզրակացությունը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Տալ համաձայնություն Փառանձեմ Ֆրունզեյի Պողոսյանին և Մանվել Ֆրունզեյի Պողոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղում գտնվող՝ 04-009-0003-0024 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ 04-074-0003-0017-ից կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 56.0 քառակուսի մետր մակերեսով հողամասի սուբյեկտի փոփոխություն՝ Փառանձեմ Ֆրունզեյի Պողոսյանի և Մանվել Ֆրունզեյի Պողոսյանի կողմից պետական գրանցում ստանալու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 66-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ -</u>** ***ՍԵԴՐԱԿ ՅՈՒՐԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ և ԱՆԱՍՏԱՍԻՅԱ ՎԱՍԻԼԻԻ ՏԱՐԱՍԿԻՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ - (Զեկ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի

ղեկավարի կողմից 2025 թվականի հունիսի 17-ին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը և քաղաքացի Սեդրակ Յուրիկի Կարապետյանի և Անաստասիյա Վասիլիի Տարասկինային 2025 թվականի հունիսի 12-ի N 2807 դիմումը,Փարաքար համայնքի ավագանու <<Քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի>> մշտական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 20-ի N 3 դրական եզրակացությունը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող՝ Սեդրակ Յուրիկի Կարապետյանին և Անաստասիյա Վասիլիի Տարասկինային ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, 04-094-0519-0019 կադաստրային ծածկագրով, 0,045 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հողատեսքը՝ վարելահող/ հողամասի նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ հետագայում գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն կառուցելու համար:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՓԱՐՓԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 67-Ա)*

***<u>ԼՍԵՑԻՆ-</u> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ԹԻՎ 39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ -(Զեկ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով քաղաքացի Արսեն Ֆելիքսի Մելիքսեթյանի 2024 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 6374 դիմումը՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 14-ի «Արսեն Մելիքսեթյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» թիվ 39-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) 1-ին կետում «0.3» թվերի փոխարեն կարդալ «0.3169» թվերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 68-Ա)*

**ԼՍԵՑԻՆ - *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ -(Զեկ. Անյուտա Սաֆարյան)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի հաջորդ՝ հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 10:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ԶԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 69-Ա)*

Ավագանու անդամներ

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԵՍԱՅԱՆ

ՍՈՒՐԻԿ ՁԱՔԵՎՈՍՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԶ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱԲՐԱՀԱՄ ՓԱՐՓԱՐՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՓԱՐՓԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

*Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ*

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ________________

*Նիստն արձանագրեց*՝ Գայանե Մանուկյանը _________________________________